

Այն աշպէսով մենք կը հասնինք անսպասելի, անակնկալ եզրակացութեան մը. — հայերէն բառի գործածութեան վկայութիւնը Յ. Ք. 100 թուականին, Ոսկեգարէն 300 տարի առաջ, հնութիւն մը՝ որուն հասած չեն երբեք ո՛չ մեր ձեռագիրները, ո՛չ մեր արձանագրութիւնները և ո՛չ ալ ուրիշ ազգերու հին հին յիշատակարանները:

22. Օրայ

Քարոզեաց Յովնան զկործանումն ի վերայ Նինուէացոցն. արկ ի նոսա սոսկումն և Պրոգնումն, և սերմանաց ի նոսա հրացումն, և ետուն նոցա նմա օրայ զապաշաւ ոգոց և պտուղ ապաշխարութեան (Հտ. Բ. էջ 109):

Թերեւս որայ բառն է՝ իբր հոմանիշ պտուղ ձևին: Բնագրին համեմատութիւնը հոս բոլորովին անհրաժեշտ է:

* *

Ս. Կիբեմի Խոստովանութեան մէջ՝ որ հրատարակուած է վերոյիշեալ Գիրք Աղօթից մէջ (տպ. Երուսաղէմ 1870), կը գտնեմ ես երեք բառ, որոնք են.

1. Ժամարհակ «ժամասացութեան վերջը, ժամէն արձակուիլը»։ Մեղայ... անյազ ուտելով, զորովայնս խնդելով, առանց ժամի և ժամարձակի ճաշակելով, զպահսն արհամարհելով (էջ 20): Ասկէ կ'երևայ նաև որ ժամասացութեան միջոցին ճաշելը մեղք կը համարուէր:

2. Զասագայրատոս «ճառագայթ տուող, շողք արձակող»։ Զրազ ճշմարտութեան և ճառագայթատու, մերկեա՛ յինէն զխաւար մթացեալ մեղացա (էջ 26):

3. Վաճառասիրի չշահողիտութիւն ընել»։ Մեղուցեալ եմ Աստուծոյ ազահուութեամբ և արծաթսիրութեամբ, խարելով, աւելի առնելով և պակաս տալով, վաճառասիրելով, կծծելով, գաղտ գողնալով (էջ 20):

Հ. ԱՆՈՒԾԱՆ

վեհր

«ԽՈՋԱՐԱՐ»

«ԲԱԶՄԱՎԷՊ»ի փետրուարի պրակին մէջ հանդիպեցայ Պր. Աճառեանի Ս. Ե. Կիբեմի ճառերուն մէջ գտած՝ «Նոր բառերու» շարքին՝ և Խոհարար բառս, որու բացատրութիւնն անորոշ թողուած է:

Այդ բառը իմ մտքին ալ շփոթութիւն պատճառեց, երբ Հոռմի Խտխտոտո Բիրիկո Աստուածաշէի Հիմնարկութեան Պրոֆ. Յ. Մարէտտիի խնդրանք յիշեալ Յովնանու ճառի խաւերէն թարգմանութիւնն ըրի: Երբ զարմանքս բացատրեցի ասորագէտ Պրոֆեսորին՝ ժպտելով ասաց, որ բնագրին մէջն ալ Խոհարար է:

Սակայն ասորիներէն կրկնիմաստ է. և կը նշանակէ թէ՛ կերակուր եփող և թէ Դատաւոր և դահիճ: Այսինքն իրեն քարոզութեամբը սարսափահար Նինուէացոց մէջ՝ Յովնան սարսափեցուցիչ դատաւորի մը պէս կանգնած կը նկատէ, և դահի մը սպառնական ձեւ մէջ իբր թէ ասէ՛. Երեք օրէն Նինուէ կը կործանի եթէ չապաշխարէք:

Երկիւղն աննկարագրելի եղած է, որ մինչև անգամ անասուններուն ալ ծոմ պահել տուած են, և արդինաւոր եղած պիտի ըլլայ՝ առանց պատճառն հասկանալու և ի շինութիւն պահել տուողներուն:

Հ. Գ. Ն.

Գ Ր Ա Կ Ա Ն

ԽՈՋԱՐԱՐ ԳԵՐԵԶՄԱՆՆՈՅԻ ՍԷՋ

* * *

Տարրականն ձեռնին է սե նոճիներէն, Որոնք անհուն օտաւիւնի մէջ կ'որորեն Գորը ու երեւակ շերմացարերը մարտերայ, Իրեկնալոյսն երգի մը վանկն է ոսկեղէն Որ ըստուերին մանեղակին մէջ կը զոգայ...

Ա՛հ, չզգիւնալ ճամբն որ մեզ կ'առաջնորդէ, Ինչպէս լուսինը ցայգաթման իր արծաթէ. Գերեզմանէն Անծանթին ցընորակաւ.

Ա՛հ, լըզդիտանւոյ որ շողոյ այս միւն որ կը կաթէ
թերեւս արցունքն է աչքերուն որ փակուցանաւ...

Գիտեա՛ւ միայն որ զարժեք են ափ մը աճին
Անոնք որ լոյսը զրկեցին, հոգի զոգոյշուն,
վհէ մոռացում վշտի, պտարանք երթանկաբեր...
Մըքընշաղն է աստեղային, խորանկ, հելուն,
Աղբիւրին պէս ուր աստարակի զոյգ մը կ'ըմպէր...

Հոգիս ամբողջ ա՛ւ կ'արթըննայ մաքիս մրափն,
Բոյրեր կ'անցնին, ջրմապար է. մայնեք կ'երգեն.
Մե՛լամդձիկ առանձնութիւնն է սոցոթքն...
Լուսնակն ա՛նա՛ նոճիկերու տերևոյթքն.
Լըռութեան Երգ: Ա՛լ աստարակները լըռուցին...

Հոգը հիմա կը բարբախէ. անակընկալ
Զարթում շունչի. Սա զարթաւունն է զերակալ
Որուն վըրայ լուսինն հնգաթը կ'ընթեռնու՛մ.
Ի՛նչ կախարդանք, հոգիին մէջ միայն կարգալ
Բնութեան խորհուրդն յաւերժական և անպատու...

Լուսինը՝ սև եփննաւ բեր ու սակեղէն
Բնեռներով ապարանքի մը գոց ցոնէն
Վար կը նայի աղբիւրին մէջ, աչքիկ ամպոյն,
Ու՛ մէկ սիրտ, մ'էկ մէկ նայուածք՝ ուր Անցնալէն
Կայծ մը վառի յիշատակին մէջ իր տրոփուն...

Ինչ որ սեղմում էր մեռք մեռքի, ինչ որ ժպտիւ
Աչքերու մէջ, ինչ որ համբոյ՛ն աղանակիտ
Հոգիներու ջրվէժ, ինչ որ հառա՛նք էր վառ
Մարմիններու խունկերուն մէջ, Գիւրքի վըճիտ,
Փոռ շաւաններդ ինկան փոսին մէջ այս խաւար...

Եղէգնեքն ա՛նա՛ թռչուն մը կը փախի.
Բո՛ւ մը, կենե՛ն մը, օդին մէջ զո՛ղ մրմունջի
Փախուսան Երազ դէպի միջոցն համաստեղեան...
Կենքքն հուրքն, բորբ արևնէ ափ մը փոշի.
Մո՛ռք բաժակէն ուր աստուածները զինուցան...

Բառե՛ր՝ որոնց պարզութեան մէջ յուզումն է խոր,
Բառե՛ր որոնք բղթած, աղո՛թքն է լուսաւոր,
«Աստ հանգչի՛» Սէր, «Աստ հանգչի՛» Յոյս, պատարնք
Եւ իրական ներառայնաց լուս հոգին՝ որ |միայն,
Կը լըսէ երգն Յիշատակին՝ ցնարէն Մահուան...

Աղբիւրին մէջ կը դեպի. սև նոճիկերուն
Մո՛ռք արեւթայն կապոյտին լոյսն անշարթ. Թրթռուն
Է մայնը որ հովին շունչին մէջ կ'երկարի...
Ո՛վ կ'արթատուէ, հնկեկայգին մի կը անհուն
Սերբաւ ցայգին մէջ է սփռեք նման խաւարի...

Պիտի չի գա՛յ մէկը, մէկը հազարներին
Որոնք անցան իրենց ուսին վրայ կըրկէն
Արևին լոյսն, ինկուէն փառքի մը եփրանին,

Մէկը որ բո՛ւ մը զիտայ լո՛կ այն երգերն՝
Որ Լըռութեան խորհուրդներուն մէջ կը լըսուին...

Կը խօսի միտքն. ու կը փախի հոգին՝ մեղս,
Յուրա, ամայի պարտէզներէն մոռ թառեռու,
Հոգին՝ որ միշտ չ'երկնցնէրուն՝ է՛ տարալի,
Հոգին՝ աչքիտ՝ կարաւ ընդմիշտ օրորուելու
Յաւերժայոյց ալիքներէն խորունկ ձովի...

Կըմախապմոր ... ո՛ւ. Խրանքն են որ անձօգրէն
Իրարու դէմ կը զարնելին հովին Թնկն
Որ կ'ընդլայնի փոթորկիկն մէջ խօշարաց...
Որքն է մաւր ըրթունքնեղը, տարփորէն
Սա լուսիննէն Թերեւս քի՛ր անգամ օծուած...

Դարձի՛ր Լոյսին, զարձի՛ր Կենանքին, Երազներուն,
Եթէ կաթիլ մ'ինկաւ որտեղ մէջ երեսուն
Յայգին, տիւրն միջև առկաթ, լաճի մը պէս,
Կաթիլ մը ցոյ որ ըլլայ բոցն արևհերուն,
Դուն յաւիտեան աստուածօրէն զինով մըն ես...

Ո՛վ մերկութիւն աստեղային, երբ հոգին
Շուրջ ընթերցէն Թաւիլէ մէջ կը պարտաւրէն
Գիշերական այս վայրկեանները վիժանուաւ,
Որոնք կապոյտ աղբիւրին մէջ լուս ու խորին
Կը ցուննայ Միտքը՝ տեսի՛լ կրկնեղնայթ...

Գոցցեա մարմինըս փեթակ մ'է զարնանալէն,
Ուր քո՛ւ հոգին ծաղկեկներուն բորբ աւելէն
Բերայագած՝ կը ճըրպա՛մ, հսկայ մեղու,
Խորթ միջատներ սակի Թնկերդ կը մաշեն,
Զարթի՛ր, Հոգիս, դէպ է Արեւ փախչելու...

Քանի՛ օրեր պահեցին կոմըն շուշանի
Իրենց կտորքին՝ մեռած կոյսերը զեղանի...
Քանի՛ օրեր անոնք մարմինն՝ հարսանկեան
Քոզերու մէջ՝ վարդերէն բոյր առաւ զաղտնի
Գեղեղմա՛նին տարալուծող ամայութեան...

Քանի՛ օրեր մորթը մընաց խոնկէ զոյնով
Ուր արևնին բոցը կ'այլեր՝ ոտաակնելով
Շրթանքներուն վըրայ ծաղկե՛ր համբոյրին...
Ու մինչև ե՛րբ մեռող՝ օրսին վըրայ հանգչելով՝
Իբրև Երգում սիրոյ՝ պահեց իր մատանին...

Ա՛հ, ասքերուն Թնկի շարժումն որ կը կայթէ
Այս երկրին վրայ... Խումբերն անցան... յոգնած վիշտէ՛
Ճարժուն եղբքն անդարձօրէն կը սպասե՛մ լուս...
Լուսընկային միւնէն հազատաւ ողջան ցարա է,
Ու կը հնձէ հեղեղներուն մայնը աղեղուր...

Մըքընշաղն կը բարձրանայ հովը նորեն,
Արեւթ կանթեղը մարեցաւ նոճիկներին,
Բո՛ւ մը ծանկեց իր Թնկով ճրպալ յոյսին...

Աղբիւրին լացը խորունկցաւ անհունորէն,
Շերիմներն ալ մարմիններու պէս կը մռնէր...

ԱՆՏԱՌԻՆ ԱՌԱՄՊԵԼԸ



Ո՛ր են բոյները տատարկի ճրը զոգեբուն...
Սիրտը մահուան ձեռքերուն մէջ, սիրտը անհուն
Մաղիկ մը չէ՞ որուն տրամադը կը հասնի
Հին երկնքի մ'արդէն լիջած արեւներուն...
Ու դարձ' սիրտն ըրին սափա՞ր մ'արտատուալի...

Կը դառնայ ըստին իր ակէն բոցը՝ չի մարած.
Ո՛վ յետին պաշն որ կ'արժէ կեանք մը լուսարբած,
Ո՛վ հրաժեշտին յանգրժութիւնը վերաւոր
Ժամանակին ծաւի կուրծքին վրայ թևաբաց...
Կը լընձ ժայնն որ ըստու բառը դաշնաւոր...

Ի՞նչ երազներ, ի՞նչ յոյսեր, ի՞նչ համոյրներ կան
Թաղուած անհետ, ի՞նչ աստուածներ քաջորական
Այս խաւարի թեղեղբոյն մէջ մահաբոյր...
Գիւղէ՛ր, ասաղբոյ ինչո՞ւ համար կը պլպլանայ,
Ե՛րբ կը ցամքի սէրն իսկ, վրձնա խորունկ աղբիւր...

Բայց վայրկեանն է ինկած մարգրիտ այն մանեակէն .
Զոր հիւսցնին Մազթաղիէն է Անանքէն,
Ճակատազդերն ու Տառապանքն անհունաթիւ
Ու ժամանակը դարերու միայն պսակէն
Կ'առնէ ծաղկէն անոր լցնաղ ու յարատեւ...

Իրկեմնէն էր, զընէ՛ր, ասաղի մը ծաղկեմով.
Ես վերցուցի երկնքներուն սիրտը զինով,
Ու մոխրացած ուրի մ'ինկաւ իր բաժակին...
Անուհետեւ կուրծքիս երազ մը սեղմելով՝
Խորհուրդներուն ես կ'աղօթեմ պաշտապահին...

Կախա՛րդ ոչի, զոն որ արցունքը որը ճրագին
Մէջ կը թափու իրեն ըտեմն, զուն որ սակին
Կ'առաջնորդին սյծերէն դուրս՝ արեւաստներուն
Ու ոճերին, զընէ՛ր, զընէ՛ր սա լուսնակին
Որ կը մեռնի, ամզոյն աղջիկ սիրտը արին...

Կախա՛րդ ոչի, զընէ՛ր, կեանքին պէտք դառնան
Փայլելու յոգնած, տեն, ի՞նչ մեռայլ է գիշերուան
Ուղիին որ միշտ աղջալոյսին կ'առնէ ճրգում.
Սերկել մէկը բռնէ՛ր ձեռքը՝ որ չի վախճամ
Նոճիներէն, շերիմներէն մահաարտուալ...

Ու չի հասած դեռ հանգրուանն աստաւոյն,
Երազն ինծի փպտէ՛ր նորէն, իմ վիշտերու...
Ու համբուս վրայ որ արեմն կը սպիտակի,
Լընէ՛ր հոգս՝ երգի նըման կարտապոյզ՝
Տատարկներուն միջինն աղու, զարթո՛ւմ Կեանքի...:

ԱՐՍԵՆ ԵՐԿԱՅԻ .

Օր մը երբ թռչուններու երամը ճրու-
ուողիւնէ դադրեցաւ, անտառին մէջ խոր
լուծթիւն մը տիրեց: Եւ ոչ իսկ հովի ջունչ
մը կը լսուէր, իբր թէ այդ քաղցրաձայն
թռչունները անտառին մէջ հիացած՝ ըս-
պասման վիճակ մը ստեղծած ըլլային: Ոչ
մէկ խըրտոց տներենբու, ոչ մէկ շշուշ
ճիւղերու վրայ, ոչ մէկ ձայն օդոյ մէջ:
Կարծես քնութիւնը հայեցողութեան մէջ
թաղուած էր:

Յանկարծակի իմաստասէր խայտիտ մը՝
խզելով մունջ հմայքը հարցուց.

« Ի՛նչ է Կեանքը »:

Այդ ձայնին՝ չորս կողմը դողաց ու շար-
ժեցաւ: Եւ որովհետեւ այլևս խզուած էր՝
թռչուն մը համարձակեցաւ պատասխանել.
« Կեանքը երգ մ'է »:

« Ո՛վ, մրտրեան մէկ կռիւ մ'է », վրայ
բերաւ խլուրդ մը, դուրս հանելով գլուխը
որջէն, ճիշդ այն ծառին տակէն՝ որուն ճիւղ-
երուն վրայ խօսող թռչունը կ'ստտտէր:
« Կեանքը, ըստ իս, անիւն է » ըսաւ
վարդի կոկոն մը:

Գեղեցիկ թիթեռնիկ մը հանգչեցաւ վար-
դին վրայ, համբուրեց և ըսաւ. « Կեանքը
հաճոյք մ'է »:

« Ըսէ, մանուսանդ, քե ամբան կարձ օր
մ'է », մրջնաց իր բզզիւնովը՝ սակաւ-
բեայ ճանն մը և անցաւ գնաց:

« Ես կը խորհիմ որ Կեանքը՝ օգտակա-
րին և հաճոյքին միջև փոփոխութիւն մ'է »,
աւելցուց մեղուն և ծածկուեցաւ վարդին
բաժակին մէջ՝ նեկտարը ծծելով:

« Ինծի համար Կեանքը տանգրը մ'է »,
հառաչեց փոքրիկ մըջիւն մը, որ իրմէ շատ
աւելի ծանր յարդի շիւղ մը ետեւէն կը
քաշէր:

Իսկ սկիւռ մը ընկողդի մը մէջէն աւել-
ցուց. « Այո, իրատեք ունիս, Կեանքը դը-
ժուար կոտորիթ ընկողդ մ'է »:

« Ա՛, ա՛, ի՛նչ իմաստաբոյր », ծիծաղելով
պատասխան տուաւ անծեղ մը, ուզելով
հեգնութեամբ մը ծածկել ըսածին խեղճու-